կեաց։ Եւ յետ արձակմանն գնացաք ի քովն, եւ Հաբաղատին իմ ետ մի ապրշմեղէն փիլոն եւ Տէր Յովանէսին՝ վարդապետին իմոյ ետ մուխայար փիլոն մի, և ինձ ետ մի փէշկիր մարհամա չինած, Տէր Ոսկանի եւ Տէր Աւետիսին և Տէր Ոհանին՝ մի մի գօտի զլխոյ։

Եւ առաւօտուս Դշի, որ օր ամսոյն (Ապրիլ) Իէ, ելեալ յեկեղեցւոյն և գնացաք մտեալ ի նաւ, Զ եկեղեցոյ նշանաւոր եւ մեծամեծ իշխանօքն հանդերձ գնացաք ի կղզին Ներսէսի մեծի հայրապետին։

Եշի (28 Ապրիլ). երեկոյիս կրկին աւրհնեաց զմեզ և ել գնաց ի կղզոյն դէպ ի Պրուսա քաղաք։ Եւ մեք անդ ի կղզիսն յայնոսիկ կացեալ ուրախութեամբ, և Ուրբաթիս (29 Ապրիլ) եկաք։

Լ–իս ամսոյ օր Շաբաթ. Մղտեսին մեր զԷջմիածնայ թապախն բռնեց։ Յորմէ հետէ այրեալ էր՝ այնպէս ամայի մնացեալ, եւ պահոցս պեղեալ եւ սրբեալ զեկեղեցին ժամ ասէաք. և օրս զթապախն բռնեց։

Այս օրերքս յէնկիչէր աղասին թէպտիլ շուրջ գայր եւ գանէր որք հաղուստով էին եւ նոր հանդերձիւ ի քրիստոնէիցն։

Մայիս ամիս օր Կիրակի։

Եշի (5 Մայիս). Պակէ տղան մեռաւ փոքրն։

Շաբաթիս (7 Մայիս) ի կիրակմուտ գնացաք. եւ օրս Նօխուտճու տղան՝ Մելքիսեդ երէցն կռվեցաւ իշխանացն հետ և հայհոյեաց զօրէնս և զկաթողիկոսն։

Կիրակի (8 Մայիս). առաւօտուս երոցք անկաւ դուրսն ի չարտախն, եւ Քէրէստէճիքն Այազմա զափուսին։ Երեւման սուրբ խաչ ասի աւուրս։

Դշիս (11 Մայիս). Մինասն Ներսէս վարդապետին եկաւ ի Պուրսայոյ՝ վասն մնալոյ ի տեղս, բան ինչ պակաս թէ լիցի և առեալ տանիցէ։